Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Միջին դպրոցի 6-9-րդ դասարանների <<Աշխարհագրություն>> ուսումնական առարկայական չափորոշիչներում և ծրագրերում կատարված փոփոխությունների վերաբերյալ

ՀՀ ԿԳ նախարարի՝ 19.01.2011թ N 30-Ա/Ք հրամանի համաձայն վերանայվել և վերամշակվել են 6-րդ դասարանի <Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն>, 7-8-րդ դասարանների <Հասարակական աշխարհագրություն> և 9-րդ դասարանի <Հայաստանի աշխարհագրություն> առարկաների չափորոշիչներն ու ծրագրերը: Վերամշակումների հիմնական նպատակը եղել է ծրագրային նյութի այնպիսի բեռնաթափումը, որը բխում է գործածության մեջ գտնվող ծրագրերի և չափորոշիչների վերաբերյալ ուսուցիչների դասավանդման փորձի հիման վրա ներկայացված առաջարկություններիցև դիտողություններից: Այս և նախորդ ուսումնական տարիների ընթացքում նախապես հավաքվել և համակարգվել են ուսուցիչներին ուղղված հարցումների արդյունքները: Քննարկումների ընթացքում կարևորվել են հետևյալ հարցադրումները.

- առարկայի հայեցակարգի վերաբերյալ
- դասընթացի նպատակների և կրթական խնդիրների վերաբերյալ
- բովանդակային միջուկի վերաբերյալ
- սովորողների պատրաստվածությանը ներկայացվող չափորոշչային պահանջների (Ա(պարտադր), Բ(միջին), Գ(բարձր) մակարդակների վերաբերյալ
- ծրագրում ըստ դասարանների ընդգրկված թեմաների բովանդակության վերաբերյալ
- ծրագրային թեմաների հաջորդականության վերաբերյալ
- թեմաներին հատկացված ժամաքանակների վերաբերյալ
- արժեքային համակարգի վարաբերյալ:

Ծրագրերում և չափորոշիչներում կատարված փոփոխությունները

6-րդ դասարան

<Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն>

Ուսուցիչներիկողմից դասընթացի հայեցակարգի, նպատակների, կրթական խնդիրների, բովանդակային միջուկի և սովորողների պատրաստվածության չափորոշչային պահանջների վերաբերյալ էական դիտողություններ և առաջարկություններ չեն արվել: Առաջարկությունները հիմնականում վերաբերում են ծրագրում ուսուցման համար նախատեսված թեմաներին հատկացված ժամաքանակին: Մեծամասնությունը գտնում է, որ 6-րդ դասարանում շաբաթական մեկ դասաժամը բավարար չէ տվյալ դասընթացի լիարժեք յուրացման համար:

Ստացված առաջարկությունների հիման վրա 6-րդ դասարանների աշխարհագրության ծրագրում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

Ծրագրի բովանդակությունից հանվել են հետևյալ ենթաթեմաները կամ հարցերը՝

- Բոլոր մայրցամաքների բնութագրումից հանվել են հետևյալ ենթաթեմաները.

  <Մարդը Աֆրիկայում>, <Մարդը Ավստրալիայում>,<Մարդը Հարավային Ամերիկայում>,<Մարդը Հյուսիսային Ամերիկաում>,<Մարդը Եվրասիայում>:

  <Օվկիանոսներ > թեմայից հանվել է <Մարդը և օվկիանոսը> ենթաթեման: Դասընթացում տրամաբանական կապն ապահովելու նպատակով կատարվել են որոշ թեմատիկ վերադասավորություններ:

Դասընթացի բովանդակային միջուկից հանվել են <Մայրցամաքների յուրացումը և մայրցամաքների ներքին տարբերությունները< ենթաբաժինները:

Սովորողների պատրաստվածության չափորոշչային պահանջներից վերոնշյալ թեմաները հանվել են կամ մեղմացվել են, կատարվել է նաև

չափորոշչային պահանջների խմբագրում և վերաբաշխում ըստ մակարդակների:

Խմբագրումներ են կատարվել նաև արժեքային համակարգին առնչվող բաժնում՝ դարձնելով ավելի կոնկրետ և առարկայական:

7-8-րդ դասարաններ <Հասարակական աշխարհագրություն>

Ուսուցիչների կողմից դասընթացի հայեցակարգի, նպատակների ու սկզբունքների, կրթական խնդիրների, բովանդակային միջուկի և ծրագրում ու չափորոշչում արտացոլված արժեքային համակարգի վերաբերյալ գրեթե որևէ դիտողություն կամ առաջարկություն չի ներկայացվել. դրանց վերաբերյալ հավանություն է արտահայտվել:Դիտողությունները հիմնականում վերաբերում են 7-րդ դասարանի դասընթացի որոշ թեմաների, որոնք բարդ են և տվյալ ժամաքանակի պայմաններում դժվար են ընկալվում տվյալ տարիքի սովորողների կողմից:

Ծրագրի բովանդակությունից հանվել են այն ենթաթեմաները կամ հարցերը, բարդ են տվյալ տարիքի սովորողների համար և խորությամբ ուսումնասիրվում են ավագ դպրոցի դասընթացներում.

- Ներածություն բաժնից հանվել է <Հասարակության տարածքային կազմակերպում> ենթաթեման:
- <Աշխարհի բնակչությունը> թեմայից հանվել են <ուրբանիզացիա>, <ագլոմերացիա>, <մեգապոլիս> հասկացությունները, ուրբանիզացիայի մակարդակները և տեմպերը, ուրբանիզացիայի բնորոշ գծերը, ժամանակակից դրսևորումները, աշխարհի խոշոր քաղաքային ագլոմերացիաները և մեգապոլիսները ենթաթեմաները, <ժողովրդագրական պայթյուն>, <ժողովրդագրական ճգնաժամ>, <դեպոպուլյացիա> հասկացությունները, դրանց հետևանքները, բնակչության կազմը ըստ զբաղմունքի ենթաբաժինը: Թեմային հատկացված ժամաքանակը կրճատվել է 2 ժամով, որը տրվել է պահուստային ֆոնդին, որը ուսուցիչը կարող է օգտագործել թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքների համար:
- <Բնական պայմաններ և ռեսուրսներ> թեմայից հանվել է <Աշխարհի բնակ-չության և երկրների ռեսուրսապահովվածությունն ըստ տարբեր ռեսուրսների> բաժինը:
- <Տնտեսություն>, <Համաշխարհային տնտեսություն> թեմաներից հանվել են տնտեսության տարածքային տարբերությունների առաջացման

պատճառները, տնտեսության տեղը հասարակական կյանքի ոլորտների համակարգում, <աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանում>, <մասնագիտացում> հասկացությունները, արդյունաբերության տարածքային կազմակերպման սկզբումքները և ձևերը, աշխարհի գյուղատնտեսության գլխավոր շրջանները, ապրանքային և ոչ ապրանքային գյուղատնտեսություն, արտահանման և ներմուծման կառուցվածքը, համաշխարհային առևտրի հիմնական ապրանքատեսակները էքստենսիվ ու ինտենսիվ գյուղատնտեսություն ենթաթեմաները, համաշխարհային տրանսպորտային համակարգ. տեսակները. տեղաբաշխումը, տրանսպորտի տարբեր տեսակներով աշխարհի առաջատար երկրները ենթաթեմաները, <տրանսպորտային հանգույց>, <բեռնաշրջանառությունն> և <ուղևորաշրջանառություն> հասկացությունները: Հանվել է միջազգային կազմակերպություններ ենթաթեման:

Վերաձևակերպվել են տուրիստական ինդուստրիա, կապի դերը ինֆորմացիոն հասարակության զարգացման գործում ենթաթեմաները: Թեմայն հատկացված ժամաքանակը կրժատվել է 3 ժամով, որը տրվել է պահուստային ֆոնդին, որը ուսուցիչը կարող է օգտագործել թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքների համար:

- <Ռուսաստանի Դաշնություն> թեմայից հանվել են տնտեսական գլխավոր գործընկերները, տնտսության տարածքային կազմակերպումը, տարածաշրջանային տարբերությունները ենթաթեմաները:

Պետություններից հանվել են Հունաստանը, Կանադան, Բրազիլիան, Ուկրաինան, Եգիպտոսը:

Արդյունքում կրճատվել է 8 ժամ, որը որը տրվել է պահուստային ֆոնդին, որը ուսուցիչը կարող է օգտագործել թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքների համար:

Վերոնշյալ փոփոխությունները համապատասխանեցվել են նաև դասընթացի բովանդակային միջուկի հետ:

Սովորողների պատրաստվածության չափորոշչային պահանջներից վերոնշյալ թեմաները հանվել են կամ մեղմացվել, կատարվել է նաև չափորոշչային պահանջների խմբագրում և վերաբաշխում ըստ մակարդակների:

Խմբագրումներ են կատարվել նաև արժեքային համակարգին առնչվող բաժնում՝ դարձնելով ավելի կոնկրետ և առարկայական:

9-րդ դասարան <Հայաստանի աշխարհագրություն>

Ուսուցիչների կողմից դասընթացի հայեցակարգի, նպատակների ու սկզբունքների, կրթական խնդիրների, բովանդակային միջուկի և ծրագրում ու չափորոշչում արտացոլված արժեքային համակարգի վերաբերյալ գրեթե որևէ դիտողություն կամ առաջարկություն չի ներկայացվել. դրանց վերաբերյալ հավանություն է արտահայտվել:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ <Հայաստանի աշխարհագրություն> դասընթացի ուսումնասիրությունը ավարտվում է հիմնական դպրոցում և ավագ դպրոցում այլևս չի ուսումնասիրվում, ուստի ծրագրի և չափորոշիչների լրացուցիչ բեռնաթափման կարիք չի զգացվում: Բովանդակությունից հանված նյութերը հիմնականում վերաբերում են աշխարհագրության տսությանը:

Ծրագրից հանվել են հետևյալ ենթաթեմաները կամ հարցերը՝

- **<Հայաստանի բնությունը>** թեմայից հանվել են <Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական հետազոտության համառոտ պատմությունը> ենթաթեման, <Հողերի վերընթաց գոտիականությունը, բուսականության և կենդանիների գոտիական տարածումը>, <Տարածքի ֆիիկաաշխարհագրական շրջանացման սխեման> թեմաները: <Հողային ծածկույթը> թեման վերաձևակերպվել է այսպես. <Հողերի հիմնական տիպերը և դրանց օգտագործումը> :
- Ամբողջությամբ հանվել է <Հայաստանի բնակչությունը> թեման
- <ՀՀ բնակչությունը> թեմայից հանվել են <բնակչության սոցիալական կազմ>, <ուրբանիզացիա> հասկացությունները:

Թեմաների տրամաբանական կապն ապահովելու նպատակով կատարվել են որոշ վերադասավորություններ.

- <Զարգացման շրջանային տարբերությունները> թեման վերաձևակերպվել է. <Զարգացման ներքին տարբերություններ>: Թեմայց հանվել են

<սոցիոլ-տնտեսական շրջանացումը և շրջանային մասնագիտացումը ենթաթեմաները>:

Արդյունքում կրճատվել է 5 ժամ, որը որը տրվել է պահուստային ֆոնդին, որը ուսուցիչը կարող է օգտագործել թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքների համար:

Վերոնշյալ փոփոխությունները համապատասխանեցվել են նաև դասընթացի բովանդակային միջուկի հետ:

Սովորողների պատրաստվածության չափորոշչային պահանջներից վերոնշյալ թեմաները հանվել են կամ մեղմացվել, կատարվել է նաև չափորոշչային պահանջների խմբագրում և վերաբաշխում ըստ մակարդակների:

Խմբագրումներ են կատարվել նաև արժեքային համակարգին առնչվող բաժնում՝ դարձնելով ավելի կոնկրետ և առարկայական: